Կապսի ջրամբար

Կապսի կիսակառույց ջրամբարը գտնվում է Շիրակի մարզում՝ Գյումրի քաղաքից դեպի հյուսիս 22 կմ հեռավորության վրա գտնվող Ախուրյանի գետահովտում: Կապսի պատվարի շինարարական աշխատանքները դադարեցվել են 1994թվականին. իրականացվել է միայն 20մ բարձրությամբ պատվարի մարմնի լիցք: Կիսաավարտ պատվարը ներկայումս իրենից վտանգ է ներկայացնում, քանի որ, թունելի փլուզման, կամ մեծ վարարման դեպքում կիսակառույց ջրամբարում արտահոսք կլինի պատվարի վրայով՝ ճեղքելով պատվարը: Դա մեծ վնասներ կհասցնի պատվարի ստորին բիեֆում գտնվող համայնքներին, այդ թվում կծածկի Գյումրի քաղաքի մի մասը:

1-ին փուլով՝ "ՋՌՀԿ/Ախուրյան գետ Փուլ 1" , նախատեսվում է կառուցել ընդհանուր 25 մլն մ^3 ծավալով ջրամբարի պատվարը: 25 մլն մ^3 ծավալով ջրամբարը կբարձրացնի Շիրակի ջրանցքի իշխման տակ գտնվող շուրջ 12325 հա հողատարածքների ջրապահովվածության մակարդակը, ինչպես նաև մեխանիկական ոռոգման եղանակից ինքնահոսի անցնելով, անխափան և հուսալի ոռոգում կապահովի շուրջ 2280 հա հողատարածքների համար՝ տարեկան խնայելով 1,3 մլն.կվտ.ժամ էլեկտրաէներգիա:

Ներկայումս ընթանում են Կապսի ջրամբարի կառուցման մանրամասն նախագծման աշխատանքները, մասնավորապես՝ երկրաբանական հետազոտությունները, գեոդեզիական ուսումնասիրությունները, սեյսմիկական և գեոֆիզիկական հետազոտություններն և մասնակի նախագծային աշխատաքները: Մանրամասն նախագծային աշխատանքները կավարտվեն 2018 թվականի փետրվարին, որից հետո կսկսվի շինարարական մրցութային գործընթաց: Շինարարական աշխատանքների մեկնարկը նախատեսվում է 2018 թվականի հունիսին՝ շուրջ 3 տարի տևողությամբ:

Կապսի ջրամբարի կառուցման "ՋՌՀԿ/Ախուրյան գետ Փուլ 1" ծրագիրը ֆինանսավորվում է Գերմանիայի վերակառուցման ու զարգացման բանկի (KFW) վարկային միջոցներով և ՀՀ կառավարության համաֆինանսավորմամբ՝ 60 մլն Եվրո ընդհանուր արժողությամբ:

Ծրագրի իրականացման շրջանակներում 2012 թ. նոյեմբերի 14/15-ին KFW-բանկի և ՀՀ կառավարության հետ քննարկվել է նաև 2-րդ փուլի վարկային համաձայնագրի հանձնառությունն, որի համաձայն 18.5 մլն Եվրո արժողությամբ վարկային համաձայնագիրը պետք է վավերացվի մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը: 2016 թվականի օգոստոսի 23-ին KFW բանկի կողմից ՀՀ Ֆինանսների նախարարությանն է ներկայացվել 18.5 մլն Եվրո արժողությամբ վարկային համաձայնագրի նախագիծը՝ հայերեն և անգլերեն լեզուներով:

"ՋՌՀԿ/Ախուրյան գետ Փուլ 2" վարկային համաձայնագրը նախատեսվում է Կումայրի ոռոգման թունելի, ջրի տեղափոխող ինքնահոս խողովակաշարի և շուրջ 750 հա ոռոգելի տարածքներում ոռոգման ցանցի կառուցման, ինչպես նաև նոր տեխնոլոգիաների սարքավորումների ձեռքբերման և տեղադրման համար: